**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԲՄԽԾՁԲ-2026/1-ԵՊԲՀ»**

ք. Երևան «_____»_____________ 20___թ.

**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը**, ի դեմս ռեկտոր **Արմեն Աբգարի Մուրադյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՄՈԲԻԴՐԱՄ» ՓԲԸ-ն**, ի դեմս գլխավոր տնօրեն **Կիմ Ավանեսյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **վճարահաշվարկային խորհրդատվական ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում, Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 (տասն)** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **7000000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում, գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում հետևյալ կարգով.

**1) Յուրաքանչյուր հաջորդ ամսվա մինչև 5-րդ աշխատանքային օրը Կողմերի միջև կատարվում է փոխադարձ հաշվարկ, որի գրավոր ստորագրումից հետո միայն կատարվում է ծառայության հանձնում-ընդունումը:**

**2) Յուրաքանչյուր ամիս վճարումն իրականացվում է փաստացի իրականացված շրջանառության նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ, որի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝**

**(%)=ՄԳԱx100/ՇԱԳ, որտեղ՝**

**ՄԳԱ-մասնակցի գնային առաջարկն է.**

**ՇԱԳ-շրջանառության առավելագույն գումարը՝ 1 միլիարդ:**

**Յուրաքանչյուր ամիս Կատարողին փաստացի վճարվելիք գումարի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝**

**ԱՓՎԳ=ԱՓՇ/100x(%), որտեղ՝**

**ԱՓՇ-ամսական փաստացի շրջանառությունն է.**

**(%)-փաստացի իրականացված շրջանառության նկատմամբ տոկոսային հարաբերակցությունն է:**

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**7.1.1 Պայմանագրի գործողության ընթացքում հիվանդանոցային համալիրների կանխատեսվող շրջանառությունը գումարային արտահայտությամբ կազմում է առավելագույնը 1 միլիարդ ՀՀ դրամ:**

**7.1.2 Եթե պայմանագրի գործողության ընթացքում հիվանդանոցային համալիրների կանխատեսվող շրջանառությունը գումարային արտահայտությամբ չի հասել առավելագույն 1 միլիարդ ՀՀ դրամին, ապա մնացորդային գումարի մասով պայմանագիրը լուծվում է: Հակառակ դեպքում՝ առավելագույն 1 միլիարդ ՀՀ դրամ շեմը հատելուն պես, Կատարողը դադարեցնում է տերմինալների սպասարկումը և գրավոր դիմում է Պատվիրատուին հետագա գործողությունները հստակեցնելու նպատակով:**

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի

միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am hասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **11 (տասնմեկ)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:**

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| **«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»** | **«ԿԱՏԱՐՈՂ»** |
| **«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ** | **«ՄՈԲԻԴՐԱՄ» ՓԲԸ** |
| **Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2** | **ք. Երևան, Արգիշտի 4/1** |
| **Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ** | **«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ** |
| **Հ/Հ 11500166513800** | **Հ/Հ 1930040280000100** |
| **ՀՎՀՀ 01503448** | **ՀՎՀՀ 02601438** |
| | **էլ. հասցեն info@mobidram.am** |
| | **Հեռ. (+37494) 60-05-27** |
| **Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան** | **Գլխավոր տնօրեն՝ Կ. Ավանեսյան** |
| ________________ | ________________ |
| **(ստորագրությունը)** | **(ստորագրությունը)** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

Ստորագրող

ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2007720078

2026-01-19 13:52:34 GMT+04:00

Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Հավելված թիվ 1**
**«____»____________________20_____թ. կնքված**
**«ԲՄԽԾՁԲ-2026/1-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի**

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**ՀՀ դրամ**

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 72221150/503 | Վճարահաշվարկային խորհրդատվական ծառայություններ | Վճարահաշվարկային խորհրդատվական ծառայությունների տեխնիկական բնութագիրը կից ներկայացվում է* | դրամ | 7000000 | 1 | ք. Երևան, Աբովյան 60, Մուրացան 114 | Ծառայությունների մատուցումն իրականացվելու է 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները: |

***1. Նպատակը.**

1.1 Վճարահաշվարկային խորհրդատվական ծառայությունների գնման նպատակն է բնակչությանը բժշկական օգնության և սպասարկման դիմաց կատարված վճարումների հավաքագրումը և Համալսարանի հաշվարկային հաշվին փոխանցումը:

**2. Ընդհանուր պահանջներ.**

Ծառայությունն իր մեջ ներառում է՝

2.1 Թվով 15 (տասնհինգ) հատ վճարահաշվարկային տերմինալի տրամադրում, տեղադրում, կարգաբերում և ընթացիկ սպասարկում, ընդ որում, թվով 8 (ութ) հատ տերմինալները պետք է տեղադրվեն «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրում, իսկ թվով 7 (յոթ) հատ տերմինալները պետք է տեղադրվեն «Մուրացան» հիվանդանոցային համալիրում:

2.2 Վճարահաշվարկային տերմինալը պետք է իրականացնի հետևյալ գործառույթները՝

2.2.1 Վճարողից ընդունի բանկային վճարային քարտեր, Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ գտնվող բոլոր թղթադրամները և 50 ՀՀ դրամ անվանական արժեքից բարձր մետաղադրամները և դրա դիմաց վճարողին տրամադրի վճարման անդորրագիր:

2.2.2 Տրամադրված անդորրագիրը պետք է կազմված լինի հայերեն լեզվով:

2.2.3 Վճարողին անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրվի թղթադրամ կամ մետաղադրամ վերադարձվող մանրը:

2.2.4 Վճարահաշվարկային տերմինալը պետք է աշխատի 220-240 Վ հաստատուն հոսանքի մատակարարման ցանցում:

2.2.5 Վճարահաշվարկային տերմինալը պետք է համալրված լինի երկրորդ էկրան-մոնիտորով՝ բուժհաստատությունների կողմից գովազդային և այլ տեղեկատվություն պարունակող հոլովակներ ցուցադրելու նպատակով: Ընդ որում, վերոնշյալ գովազդային և այլ նյութերը տեղադրվում են Կատարողի կողմից՝ բուժհաստատությունների պատվերով:

2.2.6 Վճարահաշվարկային տերմինալի օպերացիոն համակարգը պետք է ունենա հետևյալ հնարավորությունները՝

● Վճարահաշվարկային տերմինալը պետք է հնարավորություն ունենա ընդունելու վճարումները վճարային քարտերի միջոցով, QR կոդերով և նաև շտրիխ-կոդերի միջոցով, որոնք տրամադրվում են բուժհաստատությունների կողմից:

● Ընդունի միայն «Հերացի» թիվ 1 և «Մուրացան» հիվանդանոցային համալիրների կողմից տրամադվող բժշկական ծառայությունների դիմաց վճարումները:

● Էկրանը պետք է հնարավորություն ունենա արտացոլելու Համալսարանի կողմից մշակված դիզայնով բոլոր պատկերները (լոգոներ, տարբեր ծառայությունների պատկերներ, կոճակներ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն արտացոլող պատկերներ):

● Վճարահաշվարկային տերմինալը պետք է հնարավորություն ունենա ընդունելու միանգամից մեկից ավելի՝ մինչև թվով հիսուն հատ թղթադրամ:

● Մուտքագրված տվյալների որոնման հնարավորություն՝ նվազագույնը մեկ տարվա կտրվածքով:

2.3 Ծառայությունն իր մեջ ներառում է նաև՝

2.3.1 Ծրագրային ապահովման տեղադրում հետևյալ հնարավորություններով՝

● Համալսարանի կողմից տրամադրված գնացուցակների հիման վրա հավաքագրված և ծրագրի մեջ ներբեռնված տեղեկատվական հարթակ:

● Գնացուցակի փոփոխման դեպքում՝ տեղեկատվական հարթակի թարմացում:

● Վճարահաշվարկային տերմինալների օպերացիոն համակարգերը պետք է միացվեն Համալսարանի հաշվապահական՝ «Հայկական Ծրագրեր» համակարգին:

2.3.2 Բնակչությանը բժշկական օգնության և սպասարկման դիմաց կատարված վճարումների հավաքագրում և Համալսարանի կողմից նշված հաշվարկային հաշվին փոխանցում՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

**3. Երաշխիքային սպասարկման պահանջներ.**

3.1 Վճարահաշվարկային տերմինալների տրամադրումից, տեղադրումից և Պատվիրատուի կողմից ընդունումից հետո Կատարողը պայմանագրի գործողության ողջ ընթացքում պետք է իրականացնի տերմինալների, ներառյալ ծրագրային ապահովման երաշխիքային սպասարկում:

3.2 Երաշխիքային սպասարկման ընթացքում Կատարողը պետք է ապահովի սխալների և վրիպակների շտկում, որը չի ներառում նոր ֆունկցիոնալ հնարավորությունների ստեղծում: Անհրաժեշտության դեպքում երաշխիքային սպասարկման շրջանակներում Կատարողը պետք է իրականացնի Համակարգի ծրագրային նոր տարբերակների թողարկում և փորձարկում՝ գործառույթների սխալներն ուղղելու և բացթողումները լրացնելու նպատակով:

| | |
|---|---|
| **«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»** | **«ԿԱՏԱՐՈՂ»** |
| **«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ** | **«ՄՈԲԻԴՐԱՄ» ՓԲԸ** |
| **Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2** | **ք. Երևան, Արգիշտի 4/1** |
| **Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ** | **«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ** |
| **Հ/Հ 11500166513800** | **Հ/Հ 1930040280000100** |
| **ՀՎՀՀ 01503448** | **ՀՎՀՀ 02601438** |
| | **էլ. հասցեն info@mobidram.am** |
| | **Հեռ. (+37494) 60-05-27** |
| **Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան** | **Գլխավոր տնօրեն՝ Կ. Ավանեսյան** |
| ______________________ | ______________________ |
| **(ստորագրությունը)** | **(ստորագրությունը)** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

Ստորագրող

ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ
2007720078

2026-01-19 13:53:05 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված թիվ 2
«____»____________________20_____թ. կնքված
«ԲՄԽԾՁԲ-2026/1-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 72221150/503 | Վճարահաշվարկային խորհրդատվական ծառայություններ | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի կատարված վճարումների հավաքագրված և Համալսարանի հաշվարկային հաշվին փոխանցված գումարների նկատմամբ հաշվարկված համամասնության հետևյալ կարգով՝

1) Յուրաքանչյուր հաջորդ ամսվա մինչև 5-րդ աշխատանքային օրը Կողմերի միջև կատարվում է փոխադարձ հաշվարկ, որի գրավոր ստորագրումից հետո միայն կատարվում է ծառայության հանձնում-ընդունումը:

2) Յուրաքանչյուր ամիս վճարումն իրականացվում է փաստացի իրականացված շրջանառության նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ, որի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

(%)=ՄԳԱx100/ՇԱԳ, որտեղ՝

ՄԳԱ-մասնակցի գնային առաջարկն է.

ՇԱԳ-շրջանառության առավելագույն գումարը՝ 1 միլիարդ:

Յուրաքանչյուր ամիս Կատարողին փաստացի վճարվելիք գումարի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ԱՓՎԳ=ԱՓՇ/100x(%), որտեղ՝

ԱՓՇ-ամսական փաստացի շրջանառությունն է.

(%)-փաստացի իրականացված շրջանառության նկատմամբ տոկոսային հարաբերակցությունն է:

**Պայմանագրում և հետագայում կնքվելիք համաձայնագրում գումարները նշվում են տոկոսով:

**«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**
**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ**
**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**
**Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 11500166513800**
**ՀՎՀՀ 01503448**

**Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

______________________________
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Ստորագրող
ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ
2007720078

**«ԿԱՏԱՐՈՂ»**
**«ՄՈԲԻԴՐԱՄ» ՓԲԸ**
**ք. Երևան, Արգիշտի 4/1**
**«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 1930040280000100**
**ՀՎՀՀ 02601438**
**էլ. հասցեն info@mobidram.am**
**Հեռ. (+37494) 60-05-27**

**Գլխավոր տնօրեն՝ Կ. Ավանեսյան**

______________________________
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

2026-01-19 13:53:52 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված 3
«        »              20  թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________________ | ______________________________ |
| ____________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը _____________ | գտնվելու վայրը ________________ |
| հհ _________________________ | հհ____________________________ |
| հվհհ _______________________ | հվհհ__________________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«      » «              »  20    թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_______________________________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝    __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________________________ | ____________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________________ | ____________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
«        »            20  թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը                                        Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20      թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                    պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________________
ազգանուն, անուն

________________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________________
ազգանուն, անուն

________________________________
ստորագրություն

Հավելված N 4
«          »               20  թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ___________________-ի և ______________________-ի միջև «--»        20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը                                    կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

___________________-ի     միջև  «--»   20  թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____________________________________________          _____________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»        20  թ.

Digitally signed by AVANESYAN KIM 2507760044

Date: 2026.01.16 15:59 AMT